

**ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
ԵՔ-ԲՄԱՇՁԲ-23/105**

ք. Երևան

«29» հունիսի 2023 թ.

Երևանի քաղաքապետարանը, ի դեմս աշխատակազմի գնումների վարչության պետի Ժ/պ Վ. Պապիկյանի, որը գործում է Երևանի քաղաքապետի 14.11.2018 թվականի թիվ 3407-Ա որոշման հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «Ա.Ա.Բ. Պրոեկտ» ՍՊԸ, ի դեմս Ընկերության տնօրեն Ա. Բադալյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետև՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված **Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի փողոցների միջին նորոգման** աշխատանքները (այսուհետև՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները Կապալառուն կատարում է քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերին, ինչպես նաև սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ Համաձայն հավելված 2:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները սահմանված են սույն պայմանագրի հավելված 2-ում ներկայացված օրացուցային գրաֆիկով:

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի աշխատանքային և տեխնիկական ռեսուրսով, շինարարական նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը:

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները:

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով:

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով:

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին:

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք:

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքները կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը քաղաքաշինական նորմատիվատեխնիկական փաստաթղթերի և սույն պայմանագրի պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված ինժեներական հաղորդակցուղիների համակարգերի (էլեկտրամատակարարման, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխության և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման (շահագործման) համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր միջոցների հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված առնվազն 365 օրացուցային օր: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր միջոցների հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.11 Որակավորման և պայմանագրի կատարման պահանջարկի գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Ընդ որում սույն պայմանագրի շրջանակներում կատարված և Պատվիրատուին ներկայացված աշխատանքի արդյունքի ընդունումն իրականացվում է, եթե Կապալառուն ամբողջությամբ՝ ամենօրյա ռեժիմով ապահովել է քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջները, այդ թվում շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպումը, կահավորումը, տեխնիկական անվտանգության, սանիտարահիգիենիկ և բնապահպանական (այդ թվում կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության միջոցառումները) նորմերը՝ որի վերաբերյալ առկա է շինարարական աշխատանքների կատարման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնող՝ Պատվիրատուի հետ պայմանագիր կնքած կազմակերպության գրավոր հավաստումը:^{28.1}

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված **15 աշխատանքային** օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված ավարտված շինարարությունն ընդունող հանձնաժողով (այսուհետ՝ ընդունող Հանձնաժողով) ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար:

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում:

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ:

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝ ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում:

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 507,600,000 (հինգ հարյուր յոթ միլիոն վեց հարյուր հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը, ընդ որում՝

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով:

Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում^{30.1}:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասներորդական) տոկոսի չափով:

Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.5.1 Սույն պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման ողջ ընթացքում քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջների, այդ թվում շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպման, կահավորման, տեխնիկական անվտանգության, սանիտարահիգիենիկ և բնապահպանական (այդ թվում կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության միջոցառումների) նորմերի չպահպանման յուրաքանչյուր արձանագրված դեպքի համար Կապալառուի նկատմամբ կիրառվում է պատասխանատվության հետևյալ միջոցները^{31.1}.

N	Խախտումը	Պատասխանատվությունը
1	Շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպումը, կահավորումը չկատարել	Տուգանք – պայմանագրային գնի 0.5% չափով
2	Տեխնիկական անվտանգության նորմերի չպահպանելը	Տուգանք – պայմանագրային գնի 0.5% չափով
3	Սանիտարահիգիենիկ և բնապահպանական նորմերի չպահպանելը	Տուգանք – պայմանագրային գնի 0.5% չափով
4	Շինարարների համազգեստի վրա՝ շինարարություն իրականացնող կազմակերպության տարբերանշանի բացակայություն	Տուգանք – պայմանագրային գնի 0.5% չափով

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր

(տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Սույն պայմանագիրը կազմված է 21 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.15 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում յուրաքանչյուր հաջորդ համաձայնագիրը կնքելու համար ֆինանսական միջոցների նախատեսման համար սույն կետով տրված վեցամսյա ժամանակահատվածի հաշվարկը սկսվում նախորդ համաձայնագրով սահմանված աշխատանքի կատարման արդյունքը ողջ ծավալով պատվիրատուի կողմից ընդունվելու օրվանից: Ընդ որում, Կապալառու համաձայնագիրը կնքում և Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

8.16 Սույն պայմանագրով նախատեսված Պատվիրատուի իրավունքներն ու պարտականությունները իրականացնում **Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի շինարարության և բարեկարգման վարչությունը**

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պատվիրատու

Երևանի քաղաքապետարան
ք.Երևան 0015, Արգիշտիի փ. 1
Կենտրոնական գանձապետարան
Հ/Հ
ՀՎՀՀ 02593108

Վ. Պապիկյան

(ստորագրություն)



Կապալառու

«Ա.Ա.Բ. Պրոեկտ» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Արաբկիր 39/1ա
«Արդշինբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2470100091880010
ՀՎՀՀ 00250339

Ա. Բադալյան

(ստորագրություն)

Կ.Տ

Հավելված թիվ 1
« 29 » հունիսի 2023 թ. կնքված
աշխատանքների կատարման
թիվ << ԵՔ-ԲՄԱՇՁԲ-23/105 >> գնման պայմանագրի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ*
Արաբկիր վարչական շրջանի փողոցների միջին նորոգում
Ремонт улиц административного района Арабкир

ՀՀ NN	Աշխատանքների անվանումը Наименование работ	Չափման միավորը Единица измерения	Քանակը Объем	Միավորի արժեքը /հազ. դրամ/Стоимость единицы/тыс. драм/	Ընդամենը/հազ.դրամ/ Итого/(тысяча драм)	Կշիռը Процентное соотношение %
1	2	3	4	5	6	7
	Մամիկոնյանց փողոց Улица Мамиконянц					
I	Քանդման աշխատանքներ Разборочные работы					
1	Գոյություն ունեցող ճանապարհային ծածկի ֆրեզում հմիջ=5սմ և հանձնում սեփականատիրոջը /Фрезерование существующего дорожного покрытия hср=5см , возврат собственику	մ2 մ2	19800	0.50000	9,900.000000	
	1. Ընդամենը/հազ. դրամ/ 1.Итого /тыс. драм/			-	9,900.000000	2.340
II	Ծածկի կոնստրուկցիան Конструкция покрытия			-		
1	Փոսային նորոգում h=3-:5սմ Ямочный ремонт h=3-:5см	մ2 մ2	594.0000	3.40000	2,019.600000	
2	Շին աղբի բարձում, տեղափոխում լցակույտ 13.0կմ Погрузка строительного мусора, перевозка в отвал 13 км	տոն тон	52.2720	1.00000	52.272000	
3	Հարթեցնող շերտ մանրահատիկ ա/բետոնով հմիջ=3սմ Выравнивающий слой мелк. а/бетоном hср.=3 см	տոն тон	139.5900	30.30000	4,229.577000	
4	Մակերևութային մշակում բիտումով 0.6լ/մ2 обработка поверхности битумом 0.6л/1м2	մ2 մ2	19800.0000	0.10000	1,980.000000	
5	Ա/բ ծածկի իրականացում մանրահատիկ ա/բետոնից h=5սմ /Устройство мелкозернистого а/бетонного покрытия h=5см	մ2 մ2	19800.0000	3.59000	71,082.000000	
	2. Ընդամենը/հազ. դրամ/ 2.Итого /тыс. драм/			-	79,363.449000	18.762
III	Դիտահորեր Колодцы			-		
1	Դիտահորի սալերի ապատեղակայում, տեղակայում Демонтаж, монтаж плит колодцев	հատ шт	86	2.00000	172.000000	
2	Դիտահորերի միաձուլ բետոնե պատերի իրականացում В20 բարձրացում/ Нарращивание стен колодцев В20	մ3 м3	10.320	47.50000	490.200000	
	3. Ընդամենը/հազ. դրամ/ 3.Итого /тыс. драм/			-	662.200000	0.157
	Ընդհանուրը Մամիկոնյանց փողոց /հազ.դրամ/ Всего улица Мамиконянц/тыс. драм/			-	89,925.649000	21.259

Ա. Ավերիսյան փողոց /Փափազյան փողոցից Վաղարշյան փողոց/улица А. Аветисян /от перекрестка улицы Папазяна до перекрестки с улицы Вагаршян)					
I Քանդման աշխատանքներ Разборочные работы					
1 Գոյություն ունեցող ճանապարհային ծածկի ֆրեզում հմիջ=5սմ և հանձնում սեփականատիրոջը /Фрезерование существующего дорожного покрытия hср=5см , возврат собственику	մ2 մ2	6630	0.50000	3,315.000000	
1. Ընդամենը/հազ. դրամ/ 1.Итого /тыс. драм/			-	3,315.000000	0.784
II Ծածկի կոնստրուկցիան Конструкция покрытия					
1 Փոսային նորոգում h=3-:5սմ Ямочный ремонт h=3-:5см	մ2 մ2	198.90000	3.40000	676.260000	
2 Շին աղբի բարձում, տեղափոխում լցակայան 13.0կմ Погрузка строительного мусора, перевозка в отвал 13 км	տոն тон	17.50320	1.00000	17.503200	
3 Հարթեցնող շերտ մանրահատիկ ա/բետոնով հմիջ=3սմ Выравнивающий слой мелк. а/бетоном hср.=3 см	տոն тон	46.74150	30.30000	1,416.267450	
4 Մակերևութային մշակում բիտումով 0.6լ/մ2 обработка поверхности битумом 0.6л/м2	մ2 մ2	6630.00000	0.10000	663.000000	
5 Ա/բ ծածկի իրականացում մանրահատիկ ա/բետոնից h=5սմ/ Устройство мелкозернистого а/бетонного покрытия h=5см	մ2 մ2	6630.00000	3.59000	23,801.700000	
2. Ընդամենը/հազ. դրամ/ 2.Итого /тыс. драм/			-	26,574.730650	6.282
III Դիտահորեր Колодцы					
1 Դիտահորի սալերի ապատեղակայում, տեղակայում Демонтаж, монтаж плит колодцев	հատ шт	19.0000	2.00000	38.000000	
2 Դիտահորերի միաձույլ բետոնե պատերի իրականացում B20 բարձրացում/ Нарощивание стен колодцев B20	մ3 м3	2.2800	47.50000	108.300000	
3. Ընդամենը/հազ. դրամ/ 3.Итого /тыс. драм/			-	146.300000	0.03459
Ընդհանուրը Ա. Ավերիսյան փողոց /Փափազյան փողոցից Վաղարշյան փողոց/ /հազ.դրամ/Всего улица А. Аветисян /от перекрестка улицы Папазяна до перекрестки с улицы Вагаршян)/тыс. драм/			-	30,036.030650	7.101
Վաղարշյան փողոց /Ա. Ավերիսյան փողոց Սոսերի փողոցի խաչմերուկ/улица Вагаршяна/от перекрестка улицы А. Аветрисяна до перекрестки с улицы Сосе)					
I Քանդման աշխատանքներ Разборочные работы					
1 Գոյություն ունեցող ճանապարհային ծածկի ֆրեզում հմիջ=5սմ և հանձնում սեփականատիրոջը /Фрезерование существующего дорожного покрытия hср=5см , возврат собственику	մ2 մ2	6340	0.50000	3,170.000000	
1. Ընդամենը/հազ. դրամ/ 1.Итого /тыс. драм/			-	3,170.000000	0.749
II Ծածկի կոնստրուկցիան Конструкция покрытия					
1 Փոսային նորոգում h=3-:5սմ Ямочный ремонт h=3-:5см	մ2 մ2	190.20000	3.40000	646.680000	
2 Շին աղբի բարձում, տեղափոխում լցակայան 13.0կմ Погрузка строительного мусора, перевозка в отвал 13 км	տոն тон	16.73760	1.00000	16.737600	

3	Հարթեցնող շերտ մանրահատիկ ա/բետոնով հմիջ=3սմ Выравнивающий слой мелк. а/бетоном нср.=3 см	տոն тон	44.69700	30.30000	1,354.319100	
4	Մակերևութային մշակում բիտումով 0,6լ/մ2 обработка поверхности битумом 0.6л/1м2	մ2 մ2	6340.00000	0.10000	634.000000	
5	Ա/բ ծածկի իրականացում մանրահատիկ ա/բետոնից h=5սմ/ Устройство мелкозернистого а/бетонного покрытия h=5см	մ2 մ2	6340.00000	3.59000	22,760.600000	
2. Ընդամենը/հազ. դրամ/ 2.Итого /тыс. драм/			-		25,412.336700	6.008
III Դիտահորեր Колодцы						
1	Դիտահորի սալերի ապատեղակայում, տեղակայում Демонтаж, монтаж плит колодцев	հատ шт	36.000	2.00000	72.000000	
2	Դիտահորերի միաձուլ բետոնե պատերի իրականացում В20 բարձրացում/ Наращивание стен колодцев В20	մ3 м3	4.320	47.50000	205.200000	
3. Ընդամենը/հազ. դրամ/ 3.Итого /тыс. драм/			-		277.200000	0.066
Ընդհանուրը Վաղարշյան փողոց /Ա. Ավետիսյան փողոց Սոսեի փողոցի խաչմերուկ//հազ.դրամ/Всего улица Вагаршяна/от перекрестка улицы А. Аветрисяна до перекрестки с улицы Сосе/тыс. драм/			-		28,859.536700	6.823
Կոմիտասի փողոց /Փափազյան փողոցից Վրացական փողոց բարձրացող թև/улица Комитаса/от перекрестка улицы Папазян до перекрестки с улицы Врцакан/			-			
I Քանդման աշխատանքներ Разборочные работы						
1	Գոյություն ունեցող ճանապարհային ծածկի ֆրեզում հմիջ=5սմ և հանձնում սեփականատիրոջը /Фрезерование существующего дорожного покрытия нср=5см , возврат собственику	մ2 մ2	10760	0.50000	5,380.000000	
1. Ընդամենը/հազ. դրամ/ 1.Итого /тыс. драм/			-		5,380.000000	1.272
II Ծածկի կոնստրուկցիան Конструкция покрытия						
1	Փոսային նորոգում h=3-:5սմ Ямочный ремонт h=3-:5см	մ2 մ2	322.80000	3.40000	1,097.520000	
2	Շին աղբի բարձում, տեղափոխում լցակայան 13.0կմ Погрузка строительного мусора, перевозка в отвал 13 км	տոն тон	28.40640	1.00000	28.406400	
3	Հարթեցնող շերտ մանրահատիկ ա/բետոնով հմիջ=3սմ Выравнивающий слой мелк. а/бетоном нср.=3 см	տոն тон	75.85800	30.30000	2,298.497400	
4	Մակերևութային մշակում բիտումով 0,6լ/մ2 обработка поверхности битумом 0.6л/1м2	մ2 մ2	10760.00000	0.10000	1,076.000000	
5	Ա/բ ծածկի իրականացում մանրահատիկ ա/բետոնից h=5սմ/ Устройство мелкозернистого а/бетонного покрытия h=5см	մ2 մ2	10760.00000	3.59000	38,628.400000	
2. Ընդամենը/հազ. դրամ/ 2.Итого /тыс. драм/			-		43,128.823800	10.196

III	Դիտահորեր Колодцы			-		
1	Դիտահորի սալերի ապատեղակայում, տեղակայում Демонтаж, монтаж плит колодцев	հատ шт	37.000	2.00000	74.000000	
2	Դիտահորերի միաձույլ բետոնե պատերի իրականացում B20 բարձրացում/ Наращивание стен колодцев B20	մ3 м3	4.440	47.50000	210.900000	
	3. Ընդամենը/հազ. դրամ/ 3.Итого /тыс. драм/			-	284.900000	0.067
	Ընդհանուրը Կոմիտասի փողոց /Փափազյան փողոցից Վրացական փողոց բարձրացող թև//հազ.դրամ/Всего улица Комитаса/от улицы Папазяна до улицы Врацакан//тыс. драм/			-	48,793.723800	11.535
				-		
	Կոմիտասի փողոց /Վրացական փողոցից Փափազյան փողոց իջնող թև/улица Комитаса/от перекрестка улицы Врацакан до перекрестки с улицы Папазяна/			-		
I	Քանդման աշխատանքներ Разборочные работы			-		
1	Գոյություն ունեցող ճանապարհային ծածկի ֆրեզում հմիջ=5սմ և հանձնում սեփականատիրոջը /Фрезерование существующего дорожного покрытия hср=5см , возврат собственику	մ2 մ2	10400	0.50000	5,200.000000	
	1. Ընդամենը/հազ. դրամ/ 1.Итого /тыс. драм/			-	5,200.000000	1.229
II	Ծածկի կոնստրուկցիան Конструкция покрытия			-		
1	Փոսային նորոգում h=3-:5սմ Ямочный ремонт h=3-:5см	մ2 մ2	312.000	3.40000	1,060.800000	
2	Շին աղբի բարձում, տեղափոխում լցակայան 13.0կմ Погрузка строительного мусора, перевозка в отвал 13 км	տոն тон	27.456	1.00000	27.456000	
3	Հարթեցնող շերտ մանրահատիկ ա/բետոնով հմիջ=3սմ Выравнивающий слой мелк. а/бетоном hср.=3 см	տոն тон	73.320	30.30000	2,221.596000	
4	Մակերևութային մշակում բիտումով 0,6լ/մ2 обработка поверхности битумом 0.6л/1м2	մ2 մ2	10400.000	0.10000	1,040.000000	
5	Ա/բ ծածկի իրականացում մանրահատիկ ա/բետոնից h=5սմ/ Устройство мелкозернистого а/бетонного покрытия h=5см	մ2 մ2	10400.000	3.59000	37,336.000000	
	2. Ընդամենը/հազ. դրամ/ 2.Итого /тыс. драм/			-	41,685.852000	9.855
III	Դիտահորեր Колодцы			-		
1	Դիտահորի սալերի ապատեղակայում, տեղակայում Демонтаж, монтаж плит колодцев	հատ шт	33.000	2.00000	66.000000	
2	Դիտահորերի միաձույլ բետոնե պատերի իրականացում B20 բարձրացում/ Наращивание стен колодцев B20	մ3 м3	3.960	47.50000	188.100000	
	3. Ընդամենը/հազ. դրամ/ 3.Итого /тыс. драм/			-	254.100000	0.060
	Ընդհանուրը Կոմիտասի փողոց /Վրացական փողոցից Փափազյան փողոց իջնող թև/հազ.դրամ/Всего улица Комитаса/от перекрестка улицы Врацакан до перекрестки с улицы Папазяна//тыс. драм/			-	47,139.952000	11.144
	Վրացական փողոց/Улица Врацакан			-		

I	Քանդման աշխատանքներ Разборочные работы			-		
1	Գոյություն ունեցող ճանապարհային ծածկի ֆրեզում հմիջ=5սմ և հանձնում սեփականատիրոջը /Фрезерование существующего дорожного покрытия hср=5см , возврат собственику	մ2 մ2	2100	0.50000	1,050.000000	
	1. Ընդամենը/հազ. դրամ/ 1.Итого /тыс. драм/			-	1,050.000000	0.248
II	Ծածկի կոնստրուկցիան Конструкция покрытия			-		
1	Փոսային նորոգում h=3-:5սմ Ямочный ремонт h=3-:5см	մ2 մ2	63.0000	3.40000	214.200000	
2	Շին աղբի բարձում, տեղափոխում լցակույտ 13.0կմ Погрузка строительного мусора, перевозка в отвал 13 км	տոն тон	5.5440	1.00000	5.544000	
3	Հարթեցնող շերտ մանրահատիկ ա/բետոնով հմիջ=3սմ Выравнивающий слой мелк. а/бетоном hср.=3 см	տոն тон	14.8050	30.30000	448.591500	
4	Մակերևութային մշակում բիտումով 0.6լ/մ2 обработка поверхности битумом 0.6л/1м2	մ2 մ2	2100.0000	0.10000	210.000000	
5	Ա/բ ծածկի իրականացում մանրահատիկ ա/բետոնից h=5սմ/ Устройство мелкозернистого а/бетонного покрытия h=5см	մ2 մ2	2100.0000	3.59000	7,539.000000	
	2. Ընդամենը/հազ. դրամ/ 2.Итого /тыс. драм/			-	8,417.335500	1.990
III	Դիտահորեր Колодцы			-		
